

Իսկ որդիներդ թըշուառ
 Կամ հեռացած հորենական երկրրեն
 Կը խառնակին ազգերու խորդ արիւնով,
 Կամ նոյն երկրին ծոցին մէջ
 Կը մեռնին լուծն ուսերնուն,
 Ապրողներուն թողլով մաս
 Մերկացում<ն> ողջ հայութենէն, խորդացումս՝
 Որով կ'ըլլան իրարու դէմ թըշնամի
 Եւ թըշնամւոյն դէմ՝ ծառայ:
 Ո՛չ մեր դաշտերն ու տաճարներ քարութանդ
 Չիրենք կըրնան զայրագնել,
 Ո՛չ օտարին ծաղրանքն եւ ո՛չ անարգանք
 Կ'արթընցընեն իրենց հոգւոյն մէջ ընթարմ
 Յըպարտութիւնն հայկական:
 Կը ծառայեն եւ կ'ողբան
 Եւ ողբալով ըստըրկութիւնն աւելի՛
 Իրենց դէմքին կը յօրինեն վայելուչ...
 Եկո՛ւր, եկո՛ւր ժամանակն ա՛յս է. Եկո՛ւր...
 Ահա ցեղէդ մաս մ'ազնիւ՝
 Գաղափարի, գուպարի մէջ հալումաշ՝
 Ճամբուդ վըրայ կը սըփռէ
 Իր արիւնին հետ նոր վարդեր, կակաջներ...
 Եկո՛ւր, եկո՛ւր. Եւ Մասիսի կատարէն
 Դիւցազներու, վըկաներու հոգիներ,
 Իբր աստղերու սերմընցան,
 Տեղա՛ բոլոր իգութեան մէջ մեր երկրին,
 Մեր սըրտերուն խորունկ խորթերը հոսէ
 Արիւնդ անբիծ, զոր շիթ առ շիթ ժողվեցիր
 Վարդաններու ռազմայարդար հետքերէն,
 Եւ ըրէ մեր օրրաններն
 Արշակներու վերածընող շիրիմներ.